

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկանը 6 ռուբլի... Առանձին համարները 7 կոպեկով...

Փոփոխում գրվում են միմյանից խմբագրատան մէջ... Մեր հասցեն, Тифлисъ, Редакция «Мшакъ»... կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առևտուհան, 10—2 ժամ (բայի կիրակի և առի օրերէն) Յայտարարութիւն ընդունում է ամեն լեզուով... Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԱԿԱՆ ԼԵՁՈՒՆԵՐԻ ՍՈՎՈՐԵԼԸ

Բացարձակ կարօտ չէ այն փաստը թէ որքան արդեւեքների և դժուարութիւնների է հանդիպում առևտուց առևտրականութիւնը հարևան երկրներում, ինչպէս օրինակ Թիւրքիայում, Պարսկաստանում, Եթովպիայում, Բուխարայում, և այլ տեղերում, ուր առևտու մարդը և առևտուց առևտրի ներկայացուցիչները տեղական լեզուներին հետ կատարելապէս անմասն չեն լեզուների չեմանալով թող չէ տալիս տեղացիներին մտրիկ չեմանալով թող չէ տալիս տեղացիներին հետ, և յարաբերութիւններ սկսելու եկողների հետ, և դա արդէն անկասկած զուտում է գործին:

Յանկանալով աւելի լաւ կերպարանք տալ գործին, և տեղական լեզուների հետ ծանօթացնել առևտուրին, ֆինանսների միտնորութիւնը, ինչպէս հազարում են Պետերբուրգի լրագիրները մի նախագիծ է պատրաստել: Իրա հետ միասին ֆինանսների միտնորութիւնը յարաբերութիւն է սկսել արտաքին գործերի միտնորութեան հետ՝ իր նախագիծը իրագործելու համար: Այդ նախագիծը կը պարզուի կէտը այն է, որ առաջարկում է կայսրութեան մի քանի բաղադրներով հիմնել արևելեան լեզուների կուրսեր ձրի կամ շատ փոքր վճարով:

Այդ հարցը այժմ վճարված է հետևել կերպով՝ առևտուց հիւպատոսարաններին կից հարևան երկրներում ևր հիմնվում յատուկ դպրոցներ թիւրքա՝ մաներ պատրաստելու համար: Այդ թարգմաններ անկասկած ու թէ միայն առևտրական, այլ և բոլոր միւս տեսակի յարաբերութիւնների համար գործ կը կատարեն ծանօթանալով տեղական լեզուներին: Կայն նպատակին կարող են ծառայել անկասկած և տեղացիներից նրանք, որոնք կը ծանօթանան առևտու լեզուի հետ:

Բացի այդ տեսակի դպրոցներից որոշված է զի՝ մեկ և հետևելով միջոցին, մեծ բաղադրներով, հասարակական կից պէտք է հիմնվում տեղական լեզուների երկրորդական կ ու ռ ը ս ու բ, Երկրորդական համար: Այդ կուրսերը պէտք է ունենան լազա-

հարկի պէս յանձնել զիւղական ամբարին հացահատիկների որոշ քանակութիւնը, — աւելի լաւ չէ, մտածում են այժմ նոյն գիւղացիք, հացի նոյն քանակութիւնը, որը մինչև այժմ ամբարին յանձնվելով ջուր էր, կարգում, մենք նաող փողով ծախենք, փող դարձնենք և այդ փողը դնենք նահանգական գանձարանը, որպէս զի այդ փողով հարկաւոր դէպքում առանկը հացը, կամ բերել ամենը հացահատիկները նոյն իսկ Ռուսաստանից: Օրէնայի, Բաթումի կամ Բաքուի վրայով: Այժմ այդ գիտակցութեանը հասել են նահանգի մի քանի գիւղերը միայն, բայց գործը ընդարձակելով կարելի է որ ամբողջ նահանգը փոխարինէ հացահատիկների անպէտք, հնացած և անորոշական հաստատութիւնը: Այսպէս պահեստի դրահան հաստատութիւնը, մշտական պահեստի դրամագլխի, որը կը պահվի նահանգի պետական գանձարանում: Հացահատիկները տեղը պատրաստ գրամադրուի, — ոչ որքը կուտի, ոչ էլ կը բորբոսի, ոչ էլ միջերկր կուտվի, ոչ էլ փոխ կը տրվի հարուստ գիւղացիներին տանուտէրի ձևով: Հացահատիկները պահեստների տեղ պատրաստ, պահեստի դրամադրուի, որով հարկաւոր դէպքում միշտ կարելի է անմիջապէս բերել տալ հացահատիկները անհրաժեշտ քանակութիւնը:

Նահանգի հայ գիւղացիները գիտակցութեան վրա խօսելով չեն կարող չը յիշատակել այդ նոր յայտնվող գիտակցական շարժումն արտայայտող և ուրիշ աչքի ընկնող բնույթի երևոյթներ: 1) Իր պատմական պատճառներն ունէր այն երևոյթը, որ հայ գիւղացին զարբեր ընթացքում շինում էր գեանափոր տներ, երկիւղ կրելով ա-

յաղթանակեցին. սակայն միւս փոքրամաս- թիւնը պատկանելի թիւ մըն էր:

Այդ նիստէն մի քանի օր վերջ տ. Խո- րէն պատրիարք Հարկադրուեցաւ վերստին Հրաժարական տալ, առանց սպասելու եր- կու ամուսան պայմանաժամի լրանալուն:

Այս անգամ պատրիարքի Հրաժարականը պարզ էր. հիւանդութիւնն էր միակ պատ- ճառն, որով սրբազանը կը Հարկադրուէր քաշուիլ, առանց սպասելու հօկոտներէր 18-ին: Սրբազան իր Հրաժարականը տուաւ սեպտեմբեր 2-ի շաբաթ օրը: Լրագիրները մի քանի օր առաջ Հրատարակեցին թէ «Ամենապատիւ սրբազան պատրիարք Տայրը կը տառապի արեան բորբոքման հիւանդու- թեամբ»: Պօլսի սրամիտները կրտէն թէ եթէ պատրիարքարանը կուզէ մասնաւոր հիւանդութիւն մը հնարել Արքեան պատ- ըրիարքի համար, գէթ զանէ մի այնպիսի հիւանդութիւն, որ զոյրութիւն ունենայ հիւանդութիւններու շարքին մէջ: Արեան բորբոքումի հիւանդութիւնը անյուր հի- ւանդութիւն է:

Պատրիարքական ընտրիկներու վրայ խօ- սելէ առաջ մի քանի բառ ըսեմ Հրաժա- րեալ պատրիարքի մասին:

Իսկապէս Արքեան սրբազան լաւ հայ ու լաւ կրօնաւոր է, պատրիարքական ա- թեոսին վրայ երկար մտաւորն նա արժանի էր: Սակայն նորին սրբազանութեան երկու սխալները ծանր հետեւանքներ ունեցան և նա չէր կարող այլ ևս մնալ պատրիարքա- կան աթոռի վրայ:

Արքեան Խորէն սրբազան զարգացած մարդ է: Նա քաջ գիտէ հայերէն լեզուն և ազգային ու եկեղեցական պատմութիւնը ինչպէս նաև հմուտ է օտար պատմութեան ու ֆրանսերէն լեզուի:

Երբ տ. Խորէն Արքեան վարդապետ էր իր ու իր իշխանի նպակապայտանալու ու կը դնար էջմիածին եպիսկոպոսանալու համար, շղթանակին մէջ իրեն ուղեկից ու- նէր մի երեւիլի ֆրանսացի, պ. Անաթօլ Լըռուս Պօլիեո, որ կը դնար ի Ռուսիա ուսուցիչանալու համար այդ աշխարհի Պ. Պօլիեո Հրատարակելի Պարիզի «Revue des Deux Mondes» կիսամեայ հանդիսին մէջ իր տպաւորութիւնները և այս առթիւ-

շատ գովեստներով խօսեցաւ երիտասարդ հայ եկեղեցականի վրայ, որու հետ միա- սին էր ի շնորհաւէն:

Արքեան վարդապետ այնքան լաւ տեղե- կութիւններ տուած էր պ. Պօլիեոյին, որ նա սքանչացած կը մնար Հայաստանեայց եկեղեցիի կազմակերպութեան և հոգիի մասին:

Այդ օրէն արդէն պ. Պօլիեո համակեր- ցաւ մեզ, ու երբ Հրատարակեց իր հոյա- կապ գործը «Յարեալու կայսրութիւնը», ա- նոր մէջ շատ և շատ համակերպի էջեր նուիրեց և մեզ:

Իր պատրիարքական պաշտօնավարութեան միջոցին Արքեան պատրիարք միշտ բարի հայր մը, աղէիւ ու աղքատէր անձ երեցաւ: Ամէն ոք կատարեալ վստահութիւն ունե- ցաւ այդ եկեղեցականի հոգիի ու սրտի վրայ: Փորձառութիւնն ալ օգնելով նա պիտի բլլար շատ ժողովրդական պատրի- արք մը:

Արքեան պատրիարք ոչ միայն յայտ- նուեցաւ շատ խոհական անձ, այլ և շատ արի ու համարձակ:

Բայց, զժամադրաբար, տ. Խորէն պատ- ըրիարք երկու պարագաներու մէջ վարանտո եղաւ: Ըր շարժեցաւ իր համոզումին հա- մաձայն: Նա անսաց այնպիսի խորհուրդ- ներու, որը շատ հիաստարեր եղան: Երբ՝ պատրիարքը կարծեց թէ մի քանի եկեղե- ցականներ ու մի քանի երեւիլի անձինք՝ կրնային ներկայացնել հանրային կարծիք: Նա կարծեց, թէ ինչ որ անտեք ըսեն ար- քէն ազնի համամիտ է անտեք կամ թէ այդ անձինք միշտ ազդեցութիւն ունեն ազգին վրայ:

Այդ խորհուրդներու ակամայ անսայով էր, որ Արքեան պատրիարք չը փութաց երբ պէտք էր փութալ. փութաց երբ պէտք էր չը փութալ:

Այս է միայն իր Հրաժարականին պատ- ճառն. ուրիշ ամէն պարագայի մէջ ազնի համար, որ կը դնար ի Ռուսիա ուսուցիչանալու համար այդ աշխարհի Պ. Պօլիեո Հրատարակելի Պարիզի «Revue des Deux Mondes» կիսամեայ հանդիսին մէջ իր տպաւորութիւնները և այս առթիւ-

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԵԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ

II

Յայտնի է որ վարդուց է արդէն յարուցված է հացի ամբարների հարցը երևանեան նահանգում: Այդ հարցը յարուցված էր պաշտօնապէս, սակայն մինչև այժմ ամբարների այդ հաստատութիւնը անաշուղտութեան է հանդիպում: Հացի ամբար- ները, ինչպէս յայտնի է, հիմնվում են այն նպատակով, որ հացի թանգութեան կամ սովի ժամանակ, կամ վերջնապէս երբ երկրում երաշ- տութիւն է տիրում՝ ամբարած հացահատիկներով կարելի լինէր օգնութիւն հասցնել ժողովրդին կէտան գնով ծախելով ժողովրդի վրա հացը թէ ուտելու, թէ դաշտերը սերմանելու համար: Գա- զափարը, ինչպէս տեսնում է ընթերցողը, գովելի է, սակայն գործնականապէս այդ հացի ամբար- ները երբեք չեն համարում իրանց նպատակին: Երբ հացի թանգութիւն է լինում, կամ երբ անաշուղտ և երաշտ տարվայ պատճառով զիւղացին սերմանելու համար հացահատիկներ չունի, վեր- ջապէս երբ հարկաւոր է զիմել հացի ամբարների օգնութեանը, — յայտնվում է միշտ որ ամբողջ նահանգի հացի ամբարներում երբեք ցորենի ոչ մի հատիկ չէ զանվում:

Առհասարակ յայտնի է, որ հացի ամբարների հաստատութիւնը մի հնացած և անգործնական

անպատճառ քուէ կը տան, ձայն կը տան յօգուտ նոյն տանուտէրի: Դա նոյն երևոյթն է, ինչ որ կատարվում է մեր գիւղերի եկեղեցական երեց- փոխների ձեռքում եղած եկեղեցական փողերի հետ. երեցփոխը բաժանում է պարտքով եկեղե- ցական փողերը գիւղի աղքեցիկ անձանց, — հաւատացած է, որ իր վարձուքի հետևանքը այն կը լինի, որ ինչն յաջորդ ընտրութիւններումն էլ դարձեալ երեցփոխ կը մնայ:

Այժմ նկատվում է երևանեան նահանգի հայ գիւղերից մի քանիսները մէջ մի նոր և շատ ուրախալի շարժում: Գիւղերից մի քանիսները հասկացան, որ իւրաքանչիւր գիւղում հացի ամ- բարների պահելը՝ օրէնքով ամենին պարտաւո- ըրի չէ, այլ ամբարի հիմնելը կամ չը հիմնելը գիւղի բարի կամքից է կախված: Իրուսաց օրէն- ըրում ասված է, որ հացի ամբարների հիմնելը Անդրկովկասեան երկրի գիւղերի համար ամենին պարտաւորելի չէ և նահանգագիտու կարող է մի- միայն առաջարկել գիւղի տանուտէրին հիմնել հացի ամբարը, բայց պարտաւորեցնել գիւղական հասարակութիւնը հացի ամբարը անպատճառ հիմնելու, — նա իրաւունք չունի: Եւ անա նա- հանգի մի քանի հայ գիւղերը այն գիտակցու- թեանը հասան, որ աւելի լաւ է իրանց մէջ դրամադրուել ժողովրդին հացի յայտնի քանակու- թեան ծախելուց և զոյացած դրամադրուել իրանց ծախելուց և զոյացած դրամադրուել իրանց ծախելուց: Եւ այսպէս էլ կան գանձարանը (կազմակերպութիւն): Եւ այսպէս էլ արեցին: Եւ ճշմարիտ, քանի որ գիւղի իւրաքան- չիւր ծուրը մինչև օրս պարտաւորվում էր, որը

ընան ձեռնարանի կուրսերի կերպարանքը: Պէտք է ենթադրել, որ այդ որոշումները շուտով կըսկըսեն գործադրվել:

ՆԱՄՍԿ ՇԱՄԱՌՈՒՑ

Սեպտեմբերի 7-ին

Շամալին ոչ թէ քարոզանոց է միայն իր արտաքին տեսքով, այլ նա խարխուլ է և իր ներքին կազմակերպությանը: Կենտրոն Շամալինում մեծ է: Բնակիչների բնակարանները լինում են ամօթալի պակասութիւններով: Կարգապահութիւնը աչքաթող է արված քաղաքում: Այդ ամենը միատարր կերպով ներկայացնում է զիտողի առաջ քաղաքը որպէս մի վայրենի բնակատեղի, որտեղ մարդ միայն կը բթնայ ու կանկարդանայ: Եւ այդպէս էլ լինում է: Հայկական ներկայ կենտրոն պահանջներն ընդունող ու նրանցով զբաղվող երիտասարդութիւնն հիմնովին չը կայ: Կան մի քանի ձեռնարկներ կողմը խիստ ծառայողներ, որոնց արտաքինը, ճիշդ խոստովանված, մի բանի նմանակում է, բայց որ մտեցնար՝ կը խղճահարկեն ձանաչելով դրանց մտաւոր կամ բարոյական մասնկտրութիւնը և աշխարհայեցողութիւնը: Կրանք ոչ մի բանի վրա երկու բողէ չեն նայի, մի միտք հինգ բողէ չէ կարող խօսակցութեան նիւթ լինել զբրանց համար: Լուրջ խօսակցութեան ժամանակ կամ առ երես կը հանրեն կամ յորանջելով մի կերպ խոյս կը տան: Երկու հայերէն բաներից յետոյ երեքը օտար պիտի լինի, որ սրանց ճաշակի համեմատ լինի: Այսպիսով կամենում են իրանց կրթված ցոյց տալ: Եւրթված խօսքի միտքը հասկանում են այնպէս, ինչպէս արդէն գործադրում են. այսինքն հարուստները փոխելով, շարժողութեան կամ անշարժ դիրքի մի քանի ձեռքի հետ ընտելանալով, խօսակցութեան մէջ ոտոտաւ այս բառարանից դէպի այն և որքան կատարելագործվեցին տնօրինակ կենտրոն մէջ, նոյնքան իրանց այդ դասակարգի պարունակը կրթված են համարում: Սրանք քաղաքի ինտելիգենցիան և ասված դասակարգի տեղն են բերում:

Քաղաքը անկանոն է ասեցինք, որովհետև չը կան մէջը այն բարեկարգութիւնները, որոնք անհրաժեշտ են ամեն մի քաղաքի համար: Օրինակ, կը մտնէ շուկայ՝ ամեն տեղ աչքի կընկնեն հրահարանան ձեռք քառ կշիռները, մինչև անգամ քաղաքային կշիռով վրա դէպք եղած, որ կշիռներն ալիւր փողոցից վերցրած մի մեծ քարով, որը, ինչպէս հաւատացնում էին, 20 ֆունտանոց էր: Եթէ քաղաքային կշիռ վրա արդէս է հակվում, ուրեմն հնչում է երևակայել, որ խանութներում ու չըջող մրցակցաների մօտ լինում են այդ քարերի փշրանքներով: Տակաւ ասված բանը չէք տեսնի: Կանցնէք մի ամենայնայնի փողոցի մայթերով, յանկարծ կը տեսնէք ձանապարհը փակ թուրք

զուրանչու քէֆը ուղել է, որ անցքը փակելով ազատ պահի իր միջերը արևի ճառագայթները, կամ նա ամբողջ մայթի լայնութեամբ իր շարժիչները (պատշգամբի ձևով անաղին պարտիական մասճակալ) դրել և խայտառակ կերպով մրափել է:

Գինեաներում չը կան ամեն տեղ գործածված օրինակը չափերը: Մի կաւ ամեն ծառայում է արդունի չափերի փոխարէն: Հաւանական է, որ նա այնքան ճիշդ լինի, որքան զինվածատի երդուններն են ճիշդ, իբր նա ման անոց կամ չարահանոց չափս է: Եթէ այդ մասնանոցը կամ չարահանոցը այսօր կտրվեցին, հաւանական է ուրեմն և այն, որ զինվածատը ճիշդ այնպիսին դժուար պիտի ճարէր: Հարկաւոր է թէ այս և թէ վերոգրեալ թիւրութիւնները վրա հակող լինի: Ամբողջ քաղաքում եղած լայտերները մի մասը կատարուեն աչքաթող է անում զիշիւնները վառել, մնացածներն էլ իրանց թեթև գրութեամբ և սեւացած ապակիներով անցողիներն խոնարհ դուրս են կուսնում: Պատահաբարտան կայարանը զբանվում է երեք վերտաշափ երկարութիւն ունեցող քաղաքի համարեա թէ ամենալիւրն մտաւմ: Եւ այդքան ձանապարհը ձևովայ ցեխով, ցրտով և ամուրայ օթով, խնդը բնակիչները ստիպված են լինում շարունակ բարձրանալ այդ մեծ տարածութիւնը:

Մեր քաղաքային այգին բաժանված է երկու մասերի: մի մասում առանձնացած են ազաները՝ կլուրի անդամները, իսկ միւսում հասարակ մահկանացուները: Առաջինները ազատ են իրանց բաժնի ցանցապատով արիւնների պատճառով անախորժութիւններից, իսկ վերջինները միշտ ենթարկվում են անկարգութիւնների և անկայել տեսարանների:

Թէ քաղաքայիններից և թէ գիւղացիներից շատ թշուառներ ճնշված են անխիղճ վաշխառուների 25—40% ծանրութեան տակ. այդպիսինները տարրով փող վերցնողներն են, իսկ ամեն հաշուով տուկու միջարդները կեղծվում են մանթիւն ամաւական 5—6 կոպէկ մտարկով: Այդ անբարեխիղճ վաշխառուներից շատերը պատուաւոր քաղաքացիներ են կրում:

ՆԵՐՒԻՆ ԼՈՒՐԻՐ

Թիֆլիսի Կենտրոնական գրալստանոցը խնդրում է մեզ տպագրել հետևեալ հերթումը. «Մշակի» № 102-ի մէջ գրված է, որ Կենտրոնական գրալստանոցը Հայր Գևորգ Ալիւանի «Այրարատի» և «Միւնիքի» համար 20-ական թուրք բաժանորդագին ընդունելով, Միւնիքիան միաբանութեամբ ուղարկում է միայն 15 թուրք, իր միջնորդութեան համար վերապահելով 5 թուրք: Կա զբարտառութիւն է և ահա ճշմարտութիւնը. Վենետիկի Միւնիքիանը առաջարկել են Կենտրոնական գրալստանոցին:

Ների մի մասը գաղթում է դէպի Կարսի նահանգը, հայ գիւղացիները աշխատում են անմիջապէս գրանել գնացածները տեղերը, չլինում են (թէ կողմ դեմառնորդ) աներ, և ահա գիւղը, որը առաջ միայն մաշականներից էր բաղկացած, դառնում է կէս մաշական և կէս հայ: Այդ բաւական չէ. հայերը արևն ու յոյս ու (կապալով) են վերցնում մաշականների վարելահողերը երկու կողմերի համար ձեռնոտ պայմաններով և սկսում են մշակել՝ համ իրանց հողերը, համ էլ մաշականները:

4) Նահանգի քրիւղերը բացառապէս խաչնարածներ են, բայց վերջին ժամանակները նրանց և երկրի հաստատաբանակ թուրքը և հայ գիւղական ազգաբնակչութեան մէջ սկսել է մղվել մի խիստ տնտեսական կռիւ: Քիւրք խաչնարածների հողերը հետզհետէ պակասում են և անցնելով թուրքը և հայ հարստատերակ գիւղացիների ձեռքը դառնում են վարելահողեր: Նահանգի քրիւղ խաչնարած ազգաբնակչութիւնը հետզհետէ դոյալնում է մի տեսակ հողատուրկ պրօլետարատի իր տեսակ քրիւղը գնում ու ծառայութիւն է մատնում թուրք կամ հայ հաստատաբանակ գիւղացու մօտ:

5) Մինչև այժմ Թիֆլիսից մինչև Երևան տանող ձանապարհի վրա ֆուրք օճ չի երևում, այսինքն ֆուրքօճներով այդ ձանապարհի վրա ապրանքներ տեղափոխողները՝ երկը են միշտ բացառապէս կամ մաշականները կամ թուրքերը: Այժմ այդ բանուն էլ հայերը սկսել են մրցել առաջինների հետ և այժմ է ժամանակն ավարտվում, հայերը սկսել են աւելի մեծ փոխութեան վարձը, հայերը սկսել են աւելի մեծ

բոնական գրալստանոցին, բաժանորդագրութիւն բանալով ընդունել իւրաքանչիւր բաժանորդագրողից ուսական փողով 20 թուրք, որից գրալստանոցի աշխատութեան համար 2 թուրք լին, ասել է 10% վերապահելով, 18 ր. Վենետիկ ուղարկել: «Այրարատի» բաժանորդագրութիւնից հաւաքած փողերը վաղուց ուղարկված են և անգործարարները ստացված, այդ կը վկայի և Միւնիքիան ու ինտի վերապատիւ: Հայր տպարանապետը Հարկ է նկատել, որ Կենտրոնական գրալստանոցը շատ ուսուցիչներից մինչև այսօր էլ «Այրարատի» բաժանորդագրին չէ ստացել և իր գումարներից է ուղարկել Վենետիկ պակասորդը: Ինչ կը վերաբերի օտարաքաղաքացի բաժանորդներին, պէտք է յայտնենք, որ Միւնիքիան միաբանութիւնը պարտաւորվել է զբերել ձանապարհաւարը հողալ մինչև բաժանորդագրատեղը, Թիֆլիս, և ոչ թէ Ռուսաստանի ամեն մի անկիւն, հետեւաբար Թիֆլիսից դուրս բնակիչները պարտաւոր են ձանապարհաւարը մտարկել:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են, որ այդ թեմի հայոց զպրոցները վրա էլ թեմական տեսուչ նշանակվեց: Կա է մի քահանայ, տէր-Պետրոս Տէր-Յովհաննիսեան անունով:

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՑ, «Այս օրերս այստեղ վախճանվեց 115—120 տարեկան մի կին: Այդ էնոր Մաթթեազան» մինչև վերջին օրերը պահպանել էր իր աշխոյժութիւնը»:

Կ. Պօլսկի «Բէյաբեի» գործակալութիւնը հեռագրում է սեպտեմբերի 1/13-ից, որ հայոց պատրիարք Ալեքեան մի քանի օր հիւանդ պառկած էր:

Այս օրերս Թիֆլիսի վրայով անցան դէպի Պարսկաստան մի քանի ֆրանսիացի ձանապարհորդներ, որոնք գնում են հեռու արևելք՝ երկրի հետ ծանօթանալու նպատակով:

Մեզ տեղեկացնում են հաստատ աղբիւրից, որ Երևանի թեմի գիւղերում դեռ ևս ուսուցչական շատ տեղեր կան: Այդ գիւղական դպրոցներում ծառայել ցանկացողները կարող են դիմել Երևանի թեմական տեսուչ Մեսրոպ քահանայ Մելեանին: Ի դէպ, չնք կարող մատնանել չանել այն ուրախալի երևոյթի վրա, որ այդ թեմում ջանքեր են լինում նոր դպրոցներ բանալ զլիսադասպէս զպրոցագուրդի գիւղերում, որոնց թիւը այդ մեծ թեմում շատ մեծ է:

Պետական կալուածները մինիստրութիւնը ներկայացրել է մինիստրական մասնաժողովին մի նախագիծ, որի նպատակն է շտապեցնել հողաչափութիւնը պետութեան զանազան կողմերում:

Թուրք կրթիկէլ այդ ձանապարհի վրա, ապրանքներ տեղափոխելով այնպէս որ սկսեցին ոչ թէ միայն նշանաւոր կերպով մրցել մաշական և թուրք ֆուրքօճներին հետ, բայց և յաղթող հանդիսանալ այդ վերջինների վրա ապրանքներ տեղափոխելու գործում:

6) Զօրանքարայի թուրքերը տարուց տարի քոչում են դէպի Արագած սարը, որի ստորոտում գտնվում են Արաբանի և Շիրակի հայերը: Երկար ժամանակ այդ թուրքերը տամաւոր հայ գիւղերի վրա սարսափ էին դրում, միայն վերջին տարիներում, հայերը աւելի սիրտ առնելով՝ սկսել են յաղթել թուրքերին նրանց դէմ մղած տնտեսական կռիւի մէջ, յետ արմատներով այն հողերը, որոնց թուրքերը առաջվա ժամանակներում իրան էին հայերից բռնի կերպով:

7) Գանձակի նահանգի Բօրչալու գաւառի շիւղի անտանված թուրք ցեղերը տարուց տարի քոչում են Նոր-Բայազէտ գաւառի էջակ-Մէլզան ասված սարերը, որոնց ստորոտում բնակվում են Նոր-Բայազէտ գաւառի և Շիրակի ու Արարատի մի մասի հայ գիւղերը: Այդտեղ էլ վերաբանի մի մասի հայ գիւղերը: Այդտեղ էլ վերաբանի մի մասի հայ գիւղերը: Այսինքն հայերը վերջին տարիներում թուրքերից և հետզհետէ յետ են մղում նրանց իրանց գրաւած տեղերից: Ուրիշ կողմից Երևանեան նահանգի թուրքերը յաղթում են նահանգի հայերին զլիսադասպէս երկու բանով. նախ՝ նահանգի խոշոր կապիտալիստների մեծ մասը թուրքերն են, որոնք իրանց

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Այստեղի պօստատան մարկաները, բացի 7 կոպէկանոց մարկաներից, ծախում է միայն մի մարդ, և եթէ այդ պարունը գործի է լինում, միշտ մինչև դործը չը վերջացնի, մարկա չի տայ գնողին: Այդպիսով ստիպված էք լինում 10—15 թուրք սպասել, մինչև որ այդ պարունը կը բարհեմանէ ձեզ մարկա ծախել: Շատ ժամանակ էլ պօստատանը չէ լինում, թէև որոշված ժամին էք գնում մարկա գնելու, այդ ժամանակ էլ ստիպված էք 20—30 թուրք սպասել պօստատանը...»

Միւնիստրական մասնաժողովին ներկայացրած է մի նախագիծ Ռուսաստանում զիւղաւտտեական բարձրագոյն դպրոցներ հիմնելու մասին:

Մեզ գրում են ԵՐԵՎԱՆԻՑ հետևեալը. «Մինչև 8 սեպտեմբերի շատ չըք էր անում Երևանեան նահանգում, իսկ այդ օրից սկսեց տեղալ յորդ անձրև, որը տեղեց երկու օր: Մարերը ծածկվեցան ձիւնով, սակայն ամսին 10-ին Երևան քաղաքին մօտակայ արևոքում ձիւնը հալվեց, միայն Արարատը և Արագածը մինչև ստորոտները ծածկված մնացին ձիւնով: Մինչև ամսին 8-ը Արարատի և Արագածի գագաթները շատ պարզ էին երևում և մի հատ ամպ չը կար երկնքում. այնուհետև այդ հակադրի գագաթները ամպերով ծածկվեցան: Այժմ կրկին պարզ և հով օրեր է անում: Աշունացանք սկսվել է»:

Տեղական ուսու լրագիրները հարորդում են, որ ցեղերկայ մօտ 3 ժամին, Թիֆլիսի հրէական սինագոգայում հրէական մի օտնի պատճառով, երբ հրէաներին արգելված է որ և է աշխատանք, հրաւրվեցան սինագոգա մի քանի ուսուներ այնտեղ ճաղի վառելու համար: Հրաւրվածներից մէկը, հրաժարական տուած զրաղըր Ալեքսանդր Սաղօվիկն ազդանումով, մոտերը վառելու նպատակով դրեց մի քանի սեղաններ միմեանց վրա և սկսեց բարձրանալ, բայց այդ ժամանակ ծայր սեղանն ընկաւ և Սաղօվիկին ևս, հաւատարակչութիւն կորցնելով, զլիւրկալ ընկաւ յատակի վրա և այնպիսի ծանր վէրքեր ստացաւ, որ Միջաշխան հիւանդանոցը տանելուց մի քանի ժամ յետոյ վախճանվեց:

Ստացանք Պետերբուրգում հրատարակվող «Արաքս» հանդիսի առաջին դիւրքը: Այդ դիւրքը բաւական հետաքրքրական կերպով է կազմած, մէջը կան մի քանի լաւ և ժամանակակից հետաքրքրութիւն ունեցող յօդուածներ և աջողված պատկերներ: Հետաքրքրական է կարգալ Հայկական խնդրի առիթով, «Երբեքս պատրիարքի ատնախօսութիւնը», «Վերջին դէպքերի մասին» յօդուածները: Այս համարում կան 10 պատկերներ, և ի միջի այլոց Մշեցիլ օրիորդ Գիւլիգրարի, և բարեգործ Աստուածատուր Զուհիլի պատկերները: «Ա-

մեծ հարստութիւնը զլիսադասպէս ձեռք են բերել վաշխառութեամբ, քանի որ նահանգի թէ քաղաքներում և թէ գիւղերում վաշխառուները մեծ մասը թուրքերն են և երկրորդ՝ թուրքերը ունեն իրանց մէջ մի տեսակ հողային ար ի տ և կր ա ի տ, արւական (բեկերի, խաների) կալուածատէրեր, իսկ հայերը շատ աննշան թուրք ունեն ազնականներ, որոնք կապված լինին հողային կալուածատիրութեան հետ: Հին հայոց ազնականութիւնը ոչնչացել է, իսկ այժմեան հայոց ազնականութիւնը նոր ծագումից է և մեծ մասամբ բաղկացած է հողատուրկ ազնականներից, որոնք ձեռք են բերել իրանց ազնականութիւնը պետական ծառայութեան միջոցով: Սրանք կապվելով մի տեսակ ազնական պրօլետարատի մեջ մի նոր գործող դասակարգ, այն է գաւառական միջին ինտելիգենցիան դասակարգը:

Անուշտ դրանք, միացած գաւառական ուսուցիչների հետ, կը կազմեն ապագայ գաւառական ինտելիգենցիայի ցանցը, և ոչ թէ մեր համալսարանականները ինտելիգենցիան, որը սովորաբար խուսափում է գաւառներ դիւրուց և նախապատու է կենտրոնանալ զլիսադասպէս Թիֆլիսում: Միայն գաւառական հայոց ինտելիգենցիայի արք ցանցը կը կարողանայ աջողութեամբ անտեսական և բարոյական կռիւ մղել նահանգի թուրք վաշխառուների և հարստահարող թուրք կալուածատէր ազնականների դէմ:

Գրիգոր Արծրունի

բարձր մտքերէ և մի նոր բաժին, այն է գեղարուեստական բաժինը, որը բարձրացած է մօտ տասն դանդաղ պատկերներէ: Եթէ «Արարի» հրատարակիչը աշխատի աւելի խիստ ընտրութիւն անել ներքին մէջ, և ապա ներքինը դասաւորել յայտնի բաժիններով, այն ժամանակ հաւատացած ենք, որ Պետերբուրգում հրատարակիչը այդ հանդէսը շատ աւելի նետաբերական և օգտակար կարող է լինել:

Կ. Պօլսից մեզ գրում են. «Այս օրերս Պետերբուրգից այստեղ եկաւ պ. Կարապետ Եղեան»:

Կ. Պօլսի հրատարակիչը «Մասիս» հնգետասանորդայ հանդիսի խմբագրութիւնը լինողում է մեզ հրատարակել հետեւեալ յայտարարութիւնը: «Մասիս» թէ ի Ռուսաստան և թէ ի Կովկաս զատուած բաժանորդներէն ոմանք հաղորդած են խմբագրութեան, թէ չեն ստանար համարները: «Մասիս» մատակարարութիւնը խրկած է իւրաքանչիւր բաժանորդի թիւքն օրն օրին կանոնաւորապէս, սակայն յայտնուած դանդաղանքէ ենթադրելով թէ թղթատարական անխանութիւններու պատճառաւ. դուք այդ թիւքն հասած չլինելու կրնայ հասցնելու, որոշեց վերադառնալ իր կողմէն: Բայց որովհետեւ հին համարներն սպասած են, միայն 1890 յունիս 1-ի թիւէն սկսեալ խմբագրուած մինչև սեպտեմբեր 1, ընդամենը 7 թիւ: Նոյն թիւերը խրկուած են ապա հոկտեմբեր 1, և բաժանորդագրութեան սկզբնաւորութիւնն պիտի հաշուի 1890 յունիս 1-ի թիւէն: Կը խնդրուի այն բաժանորդներէն, որք դարձեալ չը ստանան այդ թիւքն, իմաց տան թիւքն մատակարարութեան: Հասցէն՝ Կ. Պօլսի, Ղալաթա, Նորաստուծիկան խան»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՐԱԿԱՑ ԿԱՐԾԻՐԸ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Ֆրանսիայում շատ անդամ նկատուած է մի երեւոյթ, որ արժանի է ուշադրութեան. — դա այն յարթանակն է, որ ասում է հասարակաց անկախ կարծիքը կառավարչական կուսակցութեան դէմ: Ֆրանսիական կառավարութեան ներկայացուցիչները յաճախ, զանազան դիպոցներում տեսակէտներով վրա հիմնված, ինչպէս և այդ պատահում է և կարող է պատահել ամեն երկրում, հա կ ա կ ր ա կ ա ն կերպով են վերաբերում դէպի այս և այն խնդրեր, դէպի քաղաքական այս կամ այն շարժումը, վերջապէս դէպի այս և այն երկիրը:

Հասարակաց կարծիքը, և այդ կարծիքի զօրեղ զեկալովը՝ մասնաւոր չէ ենթարկուած կառավարչական ընթացիկ արամադրութեան, և ոչ թէ միայն չէ ենթարկուած, այլ ուղղակի սկսում է հակառակ դիրք բռնել և բողբոջել:

Այդ միտքը ապացուցանող փաստեր շատ են պատահել նոյն իսկ վերջին տարիներս: Մի ժամանակ Ֆրանսիական կառավարութիւնը համաձայն թէ թշնամական յարաբերութեան մէջ էր իտալիայի հետ, և այդ թշնամութիւնը հիմնված էր դիպլոմատիական զանազան հայեցակէտերի վրա: Միև կողմից Ֆրանսիական հասարակաց կարծիքը և անկախ մամուլը իրանց միանդամայն կողմակից յայտնեցին այն մտքին, թէ Ֆրանսիան շատ հակասալի պատճառներով բարեկամ պիտի լինի իտալիային, և հաշտ պէտք է ապրի ազգակից իտալիայի հետ: Հասարակաց կարծիքը պիտեց այդ մտքի վրա և վերջ ի վերջոյ յաղթող հանդիսացաւ, ստիպելով կառավարութեանը փոխել իր բռնած դիրքը դէպի իտալիան:

Նոյն Ֆրանսիական կառավարութիւնը շատ անգամ փորձ է փորձել դիպլոմատիական կապեր կապել Գերմանիայի հետ. բայց հասարակաց կարծիքը և այդ կարծիքի արտայայտիչ մամուլը բողբոջել է այն քաղաքական բարեկամութեան դէմ, որը դէմ է ամբողջ ազգի քնքրելի զգացմունքներին, և իր այդ բուն բողբոջող յետ է կանգնեցրել ամբողջ Ֆրանսիական քաղաքական կեղծ և նենգ ընթացիկը: Ուրիշ փաստեր էլ շատ կան. բայց և այնպէս հարկաւոր է այդ բոլորը մի առ մի թրուել, քանի որ վերև յայտնված միտքը ապացուցիչ առանձին կարողութիւն չունի:

Հասարակաց կարծիքի այդ տեսակ անկախ դիրք ունենալը մի օրինակելի և նախանձին յատկութիւն է Ֆրանսիական ժողովրդի կեանքի մէջ: Եւ եթէ նոյն Ֆրանսիական ժողովուրդը հաւատա-

րիմ մնալով իր մեծ հարկերի պաշտպանած ազատ զարգացմանը, և ողորդելով այն մեծ դերով որ Ֆրանսիան կատարել է և պիտի կատարի ազգերի զարգացման և առաջադիմութեան գործերում, կը շարունակի անխաղախ մնալ և միշտ կողմակից լինել արդարութեան, ճշմարտութեան, այն ժամանակ Ֆրանսիական կառավարութիւնն էլ միշտ կենթարկուի նրան, և չէ կարող այնպիսի քայլեր անել, որոնք արատ բերէին Ֆրանսիայի պատմական կոչման:

ՄԱՐՍԱՅԻՆ ԼԻԳԱ

Նորիս Ալինայում կայացած միջազգայն գիւղատնտեսական ժողովում յարուցվեց մի նշանաւոր հարց. — այն է կազմակերպել միջին-և-բարձրագույն լիգա: Այդ հարցի առիթով ժողովականների մէջ երկար վիճաբանութիւններ եղան: Չանազան երկիրների ներկայացուցիչները զանազան կարծիքներ յայտնեցին:

Միջին-և-բարձրագույն լիգայի գլխաւոր նպատակն է արգելք դնել ամբիկական, հողական և մի քանի ուրիշ երկիրների ապրանքների ներմուծմանը: Գրա հետ միասին ցանկութիւն կայ աւելի հեշտացնել, և եթէ կարել է, միջին-և-բարձրագույն պետութիւնների մէջ մի երկրից միւրս ապրանք ներմուծելը ազատ դարձնել:

Միջին-և-բարձրագույն մարջայն մտքի դէմ էր գլխաւորապէս Ֆրանսիական ներկայացուցիչը: Վիճաբանութիւնները սուր կերպարանք ստացան, և պարզ երևաց, որ եւրոպական պետութիւնների այժմեան քաղաքական խճճված և թշնամական յարաբերութիւնների ժամանակ անկարելի է հիմնել այդպիսի լիգա: Ֆրանսիայի ներկայացուցիչ բռնած դիրքի դէմ խիստ յարձակողական դիրք բռնեցին Գերմանիայի ներկայացուցիչները, յայտնելով, որ Ֆրանսիայի այդպիսի դիրք բռնելու միակ պատճառը կրկին էլ զատ-Լօթարինգիւնն պէտք է համարել: Եւ էլ զատ-Լօթարինգիւնն է, որ թող չէ տալիս Ֆրանսիային տնտեսական դաշնակցութեան մէջ մանկ Գերմանիայի հետ:

Սակայն ժողովականների մեծ մասը չեն կորցնում իրանց հաւատը դէպի ապագան: Նրանք համոզված են, որ ապագայում, երբ եւրոպական պետութիւնների քաղաքական յարաբերութիւնները կը լաւանան, կարելի կը լինի կազմակերպել միջին-և-բարձրագույն մարջայն լիգա: Եւ հէնց այդ յոյսով ժողովի մէջ կազմվեց մի յանձնաժողով, որին լիպոպոլիտիկ տրիւկ պակել մանրամասն ծրագիր պատրաստել, և հրաւեր կարգաւ յօդուտ միջին-և-բարձրագույն մարջայն լիգայի:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՎԱՍՏԱՆԵՑ

Թարգի, սեպտեմբերի 4-ին

Օգոստոսի 30-ին, Թագաւոր կայսրի անունակոչութեան օտն լինելու պատճառով, քաղաքից երկու ժամ հեռաւորութիւն ունեցող Մամիգ թաւա կոչվող ուսաց հիւպատոսարանի ամբարանոցում տեղի ունեցաւ ճաշկերպով: Ռուսաց ընդհանուր հիւպատոս պ. Պետրովի հրակրակման, ներկայ էր կառավարչապետ Էմիր-Նիզամը և այլ քառասունի չափ բարձրաստիճան պաշտօնական անձինք. այնտեղ էին նոյնպէս Անդրայի, Թիւրքիայի և Ֆրանսիայի հիւպատոսները. այնտեղ էր թեմական առաջնորդ սրբ. Միխիլարեանց, նոյնպէս և վաճառականապետը և մի քանի եւրոպացի և հայ ու թուրք հպարտակ վաճառականներ: Նրաժողովական նուազախումբը վաղ առաւօտից հնչեցնում էր մուզիկան. Մամիգ-Թաւան մի արտասովոր կենդանութիւն էր ստացել այդ օրը: Արդէն ժամը 12-ն էր, հրակրակած անձինք հիւպատոսի հետ տեսնվելուց յետոյ նստեցին ճաշի Պաշտօնական անձանց համար սեղանը պատրաստված էր վրանի տակ, որոնց հետ սեղանակից էին և մի քանի պատուաւոր տիկիներ և օրերը ներ: Վրանից ոչ հեռու կից սենյակում պատրաստված էր վաճառականների սեղանը: Ճաշի ժամանակ, Էմիր-Նիզամը առաջարկեց թագաւոր կայսրի կենացը, որին հետեցին հանդիսականները երկր անգամ «ուրա» կոչելով, ապա պ. Պետրով առաջարկեց Շահի կենացը, որից յետոյ ի միջի այլոց առաջարկվեցան Էմիր-Նիզամի, պ. Պետրովի և սրբ. Միխիլարեանցի կենացը: Ժամը 3-ին վերջացաւ ճաշը:

Սերք մի անգամ ևս առիթ եւր ունեցել յայտ-

նել այստեղի անգլիական բանկի մասին. այժմ մասնաւորապէս մեր տեսութիւնն իրականացած տեսնելով, թող ներքին մեզ մի քանի խօսք ևս այդ մասին: Նախ քան այդ բանկի ճիւղի այստեղ բացվելը, տեղացիներն այն էին երազում, որ վերջապէս դրանով Պարսկաստանը պէտք է կենդանանայ, զանազան դրամական փոխադրութիւններն աւելի պէտք է դիւրանան և երկրի ֆինանսական դրութիւնը աւելի պէտք է կանոնաւորվի: Սակայն այդ ցնորքներն ազարդուն մնացին և հանդամանքները բոլորովին հակառակը ներկայացան: Իբրև փաստ, մենք կը յիշենք միմիայն մի դէպք, որը ներկայում սատիկ զբաղեցնում է հասարակութեան:

Պարսկաստանում տիրող կառավարութեան զրուան փողը ընդհանրապէս սակաւ լինելու պատճառով, գլխաւորապէս գործածութեան մէջ ուսաց և թիւրքաց ռախիւներն են: Այս հանգամանքն, ի հարկէ, չէր կարող աննկատելի մնալ հեռատես անգլիացիներին, հետեւաբար նրանք ժողովրդով բոլոր դուան փողերը, փոխարէն վճարեցին արտասահմանի փոխանակազրկելով: Հետեւեցին այն եղաւ, որ դուանը կենտրոնացնելով իրանց ձեռքը, մնացին տեղացիների ձեռքում լոկ ոսկի դրամներ, որոնց արժէքը հէնց ինքը բանկը դիտմամբ օրից օր իջեցրեց: Օրինակ, Թիւրքիայի լիւրան՝ 32 դուան 50 կոպէկից իջաւ այժմ 26 դուան 50 կ., որովհետեւ վաճառականը դուան չունի, ուրեմն ըստիպված է ոսկին դուանի տեղ վճարել աճազին վնասով իսկ սեղանաւորը դուան չունենալով, չէ էլ կարողանում փոխանակութիւններ անել: Այդ դէպքում դարձեալ սասպարեղ մնում է բանկին, և ինչպէս ուղում է իր կալքին է ծառայեցնում հասարակաց շահերը: Ի վերջոյ, ներկայումս արտունջ է տրուում հասարակութեան մէջ, ժողովներ են կազմում, սակայն որ և իրց ելք չեն գտնում. աճազին վնաս տուժողներ եղան, և տակաւին դեռ լինում են: Եթէ այսպէս շարունակվի, անկասկած քիչ ժամանակից յետոյ մի շարք խոշոր մանկացողներ կը լինեն:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Այս օրերս գերմանական «Ham. Nach.» լրագրում լոյս տեսաւ մի յօդուած, որի մէջ այն միտքն է արձարվում, թէ Գերմանիան պէտք է պաշտպանի առեւտրական շահերը Բալկանի վրա: Ենթադրում են, որ այդ յօդուածը գրված է նոյն իսկ իշխան Բիւմարիկ ձեռքով:

— Թիւրքաց կառավարութիւնն այս օրերս ուղարկել է եւրոպա մի աստիճանաւոր՝ 50,000 լիւրա տալով նրա ձեռքը՝ յատուկ յանձնարարութեամբ:

— «Figaro» լրագիրը խորհուրդ է տալիս պ. Կայսրին որպէս Ֆրանսիական հանրապետութեան նախագահ ներկայ լինելու Ֆրանսիական արդիւնաբերական ցուցահանդիսի բացմանը Մոսկվայում և յայտարարում է, որ բոլոր Ֆրանսիացիները, առանց քաղաքական կուսակցութիւնների խտրութեան, գոհ կը լինեն նրա այդ քայլից:

— Ահոն XIII պապը հիւանդ է և այլ ևս ոչ չէր ունենալով իր օրը:

— «Figaro» լրագիրը խօսքերով, նայեմքերին Գերմանիայում կը հրատարակվի մի նոր լրագիր «Deutsche Warte» անունով: Այդ լրագիրը անպայման թարգման կը լինի կայսերական քաղաքականութեան: Հրատարակիչն է բարոն Ծոռուս:

— Բոլգարական «Ազատութիւն» լրագիրը հաղորդում է, որ յունական և սերբիական ազդեցութիւնները Մակեդոնիայում ստիպեցին մակեդոնիական մի քանի ձխերի ազգաբնակիչները ուղարկել մի աղբէս ուսու կառավարութեանը, որի մէջ պահանջում են բոլգարական եպիսկոպոսներին հեռացնել Մակեդոնիայից: «Ազատութիւն» լրագիրը դարձնում է այդ փաստի վրա Բ. Դրան ուշադրութիւնը:

— Պորտուգալիայում մինիստրական ճգնաժամ է: Ենթադրութիւն կար կազմակերպել մինիստրութիւնը բոլոր կուսակցութիւնների անդամներով: Թագաւորը այդ ամենալաւ միջոց է համարում հանրապետական կուսակցութեանը դիմադրելու համար: Առժամանակ բոլոր մինիստրները հրաժարական տուին: Նոր մինիստրութեան կազմակերպութիւնը յանձնված է իրիստօֆօր Արքեշիին:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին 6 տարվայ ընթացքում Պրուսիայի դպրոցական հիմնարկութիւններում անձնապահութիւն գործեցին 289 հոգի, որոնցից 240 հոգի տղայոց, իսկ 49 հոգի օրիորդական դպրոցներից էին:

Իտալական ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը կարգադրել է, որ Հռոմում բացվի իրական բարձրագույն դպրոց: Իտալական մամուլը չնորհաւորում է այդ կարգադրութիւնը, համարելով այդ առաջադիմական մի քայլ կանանց հարցի համար:

Այս օրերս իլլինոյսում տեղի ունեցաւ չը տեսնված մի կոնգրէս. — այն է թափառաւոր լիկների և սրիկաների կոնգրէս: Կոնգրէսի անդամները վճռեցին մի պատգամաւորութիւն ուղարկել իրանցից՝ Չիկագո՝ իրանց ընկերութեան անջանց պաշտպանելու համար: Ի միջի այլոց կոնգրէսը որոշեց բրոնզեայ մի արձան կանգնեցնել ի պատիւ նեկրոսի Ալա լինպոնիստի: Գաղտնի է մի յայտնի գող, մուրացկան և արքեպոզ կին, որը թողել է քաղմաթիւ սերունդ, և այդ սերնդից դուրս են եկել նշանաւոր մարտապաններ, գողեր, արքեպոզներ, սրիկաներ և կեղծ փող կտրողներ: Հետաքրքրական է իմանալ, արդեօք իլլինոյսի իշխանութիւնը տեղ կը տայ մի այդպիսի արձան կանգնեցնելու համար:

Լճագոմում այժմ կայ 87,185 աղքատ, որոնցից 32,853-ը սպաստան չունեն:

Ամերիկական լրագիրները հաղորդում են արտասովոր մի լուր. — մի երկուստաբար մարդ Ալաբամի մէջ խելագարուեց չափից դուրս շատ պապի ռոս ձխելու պատճառով:

Մի ամերիկացի հետաքրքրական գիւտ է արել: Նա հնարել է երաժշտական—կորսետ: Հէնց որ դրսից որ և է մէկը մի փոքր ճնշում է գործում կորսետի վրա, նա խելոյն սկսում է նուազել, թէ և ոչ շատ հաճելի ձայներով:

Աթէնքի մի լրագիր 100,000 ֆրանկ պրեմիա է առաջարկում այն մարդուն, որը կը նախագուշակի թէ Յունաստանում առաջիկայ ընտրութիւնների ժամանակ քանի կառավարչական պատգամաւոր կընտրվի և քանի դիմադրական Պրեմիա առողների նպատակն է հետաքրքրել ազգաբնակիչները ընտրութեան գործով:

Վերջին խաղարկութեան 200,000 ռ. գումարը ընկել է խաղիկների բռնի Միխայիլի կնոջը:

Չիով ճանապարհորդել մօզայից ընկնում է: Այժմ մօզայի մէջ է մտնում ոտով ճանապարհորդը: Պէշկովից յետոյ, այժմ հանդէս է եկել մի օֆիցեր, որը ոտով ճանապարհ է ընկել Վլադիվոստոկից դէպի Պետերբուրգ:

Գերմանական մի քանի բժիշկ—պրօֆեսորներ նորերս հրատարակել են իրանց հետազոտութիւնները այն մասին, թէ ինչ հետեւող ունեցաւ 13—14—19 տարեկան կանանց ծնունդը: Գերմանացի պրօֆեսորները մի զիւտ են համարում այն երեխաները, որ 13 կամ 14 տարեկան կնոջ ծնած երեխաները առողջ էին... Չը դիտեն եւրոպական յարգելի գերմանականները, որ մեր աստուածալախ երկրում 11 տարեկան հասակում մարդու գնալը սովորական բան է համարվում, իսկ 12 տարեկան հասակում մարդ գտնուելը բնական... Եւ ոչ որ չէ էլ ուղում սպասել, որ այդպիսի մօք երեխան կարող է լինել հիւանդ, թոյլ, անկանոն կազմված...:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍՏԵՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 սեպտեմբերի: Սամարայի հանանդի հատարար դատաւորին՝ կառուածատէր կրաֆսկիի կողմից՝ 1887 թիւ «Гражданниг»-ի մէջ տպած մի յօդուածով հասցրած վրաւորանքի պատճառով, յօդուածագիրը դատաւորական պալատի ձեռքով դատապարտված է մի ամենայ բանտարկութեան, իսկ «Гражданниг»-ի խմբագիրը 10 օրվայ անային ձերբակալութեան:

ՍԱՄԱՐԱՆԿ, 13 սեպտեմբերի: Ֆինանսների մինիստրը ուղերովից Տաչկենտ:

ԲԵՐԼԻՆ, 13 սեպտեմբերի: Չինական դեսպան խոնդ-Սուլեյ ուղերովից Պետերբուրգ՝ բանակցելու Ռուսաստանի և Չինաստանի մէջ եղած մի քանի ընթացիկ հարցերի մասին:

ԼՈՒՆԱՅ, 13 սեպտեմբերի: Մանիպուրում կարգը վերականգնած է: Մագարայան իր իշխանութիւնը զիջեց իր եղբորը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ ԲՈՐՍԱ

Table with 2 columns: Item description and price. Includes items like '10 ֆունտ արծե', '100 մարկ', '100 ֆրանկ'.

Table with 2 columns: Item description and price. Includes items like 'երրորդ ան. կալ. ք.', 'Պետական կրթության միության', '5 1/2% բնուտ'.

Ս. Պետերբուրգի բորսայի արամադրությունը ամուր է:

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՄԻ ՊԱՏԻԱԻՈՐ ԸՆՏԱՆԻՔ

Ընդունում է գիշերօթիկ աշակերտուհիներ: Հասցեն իմանալ «Մշակի» խմբագրատան: 1-5

ԹԻՖԼԻՍԻ ԿԱՌԱՌԱՅԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԲԱՍՏՐՈՆԻՄ, կիրակի, սեպտեմբերի 16-ին, Մ. Լ. Կրավիցկիի խումբը կը սայ իր երկրորդ ներկայացումը: 1-1

Տօք. Մ. ՎԱՀԷ, վիեննայի համալսարանին, պատրաստ է սայ ամեն դիւրու- թիւն այն աղբյուրներուն, որք կը դիմեն ի վիեննա ԲՅՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅՈՒԹԵԱՆ համար: 1-2

Արդէն թարգմանված է և շուտով կը հրատարակվի Ե. Գրիգորովայի և Ա. Պետրովի գեղեցիկ կերպով կազմած «Эдиссонъ» (Էդիսոն) վերնագրով գրքիկը, որի մէջ բացի աշխարհահռչակ գիտ- նականի կենսագրութիւնից, դիւրամտեղի կերպով ծանօթացնում է և նրա երեւի գիտերի հետ: 1-1

ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՅԻ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ մի պարտնի ընտանիքում ընդունվում են գիշերօթիկ աշակերտներ: Նոյն տեղը կարող են անել և կրկնօթիկներ: Հասցեն կա- ընել է իմանալ ծառայողների խանութում, Գլխորդայա փողոցի վրա: 3-5

ՄԻ ՕՐԻՈՐԻ որ աւարտել է գիմնազիան և Գայիանան ուսումնարանի 6 դաստու- ըր, մտադրել գներով պարաստում է աշակերտներ և կրկնօթիկներ է անում ամեն ա- ւարիաներից. հասցեն. Мѣщанская улица, № 15 домъ Придонова. 3-5

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ ТОВАРИЩЕСТВО МЕХАНИЧЕСКАГО И ЧУГУННО-ЛИТЕЙНАГО ЗАВОДА



БЕЛЛИНО-ФЕНДЕРИХЪ ВЪ ОДЕССѢ.

Складъ и производство сельско-хозяйственныхъ и заводскихъ машинъ и орудій, какъ-то:

Постоянныхъ паровыхъ машинъ и котловъ разныхъ системъ и силъ, Мукомольныхъ мельницъ и всякаго рода принадлежностей къ нимъ. Шеретовокъ, вальцовыхъ поставокъ крупосѣекъ, буратовъ и всякихъ другихъ мельничныхъ машинъ системы Г. Даверио. Лѣсо- пильныхъ станковъ съ пилами. Конныхъ молотилокъ, и приводовъ, вѣялокъ, соломорѣзокъ, кукурузныхъ молотилокъ—ручныхъ, конныхъ и паровыхъ Прессовъ для винограда и сѣна. Маслобоекъ, брандспойтовъ и пасовъ. Конныхъ граблей «Голлинсвортъ».

Производство котельныхъ работъ и отливка изъ чугуна и жѣла. Выполниеніе всякаго рода заказовъ для паровыхъ вальцовыхъ мельницъ, винокурен- ныхъ, пивоваренныхъ, сахарныхъ и другихъ заводовъ, вагоны для конножѣлезныхъ дорогъ. Складъ локобилей, паровыхъ молотилокъ, конныхъ молотилокъ со штифтовыми ба- рабанами и конныхъ приводовъ известной фирмы Клейстона и Шулльвортъ въ Линкольнѣ, и Въвъ.

Главный складъ жатвенныхъ машинъ и вѣсилокъ «Жѣлѣзная рама» и «Континенталь» Джонстона.

Единственный складъ вальцовыхъ станковъ Г. ДАВЕРИО въ Цюрихѣ.

Заводъ имѣетъ свой собственный эллингъ для постройки пассажирскихъ и буксирныхъ пароходовъ, паровыхъ катеровъ, баржъ и проч. и принимаетъ заказы на поднѣти на эллингъ судовъ для исправленія или окраски подводныхъ частей и ихъ корпусовъ.

Агентъ въ Ростовѣ и Д. Г. Я. Золотухинъ, Николаевскій пер. д. Арт. Яблокова, противъ Реального учи- лища кв. № 8.

26-100 (Կ. 2.)

ԱՌԵՒՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթու- թիւն սայ երկու սեռի անձանց և պարաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատեստատներ: Աւանդելի տուարկայք սորա են 1) Առևտրական հետազոտութիւն, 2) Առևտրա- կան թուարանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա- յին), 4) Թուարանութիւն համընթի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղագրութիւն: Աւարտը սկսվում է սեպտեմբերի 15-ից, Ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնա- կարանում, Սոլովակում, Աղքատներ փրկո՞ւմի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նազդրնայա փողոցների անկիւնում, գեղատան դիմաց: Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ԶԻՐԱՊԷՍ եղբ. Ծովանոյնների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմ- նողին.— въ Тифлисѣ, С. П. Мануэляну. 14-18 (Կ. 7.)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ MESSAGERIES MARITIMES (ՄԵՍԱՃԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՕՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ ուղևորութիւնները (3 հոկտեմբերի) դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՅ GUA- DALQUIVIR (ԳԱԳԱԿՎԻՐ) շոքենաւոր, նաւագետ BERNARD (ԲԵՐՆԱՐԴ) ղեկի Կ. Պոլիս, Մարսէյ, Հալլը, Լոնդոն, և մտնելով և միջանկեալ նաւահանգստները: Աղէտները ԲԱԹՈՒՄԻՄ պ. Գ. ԷՍԷՆՅԵԻ, ԹԻՖԼԻՍՈՒՄ ԳԵՈՐԳ ԼԵՋՈՒԲԵԱՆ ԼԵՋՈՒԲԵԱՆՅ, իսկ ԲԱԹՈՒՄԻ մէջ ԳՕԼՂՈՒՍՏ: 1-2



Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿԻ Ծախվում է 40 կոպէկով Գեղագործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլի- սում: 24-52 (Ե.)

Advertisement for 'Berthac Pils' beer, featuring portraits of men and the text 'Съ ДОЗВОЛЕНІЯ МЕДИЦИНСКАГО ДЕПАРТАМЕНТА ПРИВЛЕЧЕНА ПИВАМА ПАСА ПИВАДЫ'.

Advertisement for pianos, featuring an illustration of a piano and the text 'Օգոստոսի 7-ից 1890 թ. բացվում է երաժշտա- կան գործիքների և նստանների կովկասեան կեն սորոնական դէպոս: ԵՂԲ. ԴԻՏԵՐԻՄԻՍ'.

Advertisement for 'ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԻՈՐ ՀԻԱՆԳԱՆՈՑ' (The First Soap), listing various soap brands and their prices.